

ԼՈՒՄԻՆԵ ՂԱՍՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի

անվան լեզվի ինստիտուտ

Բան. գիտ. թեկն.

lgamoyan@mail.ru

**«ՀԱԳՈՒՍ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՆՇՈՂ ԲԱՌԵՐԻ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. համանուն, հագուստ, իմաստային խումբ, բառական, բառաքերականական, համարմատ, տարարմատ, լրիվ, մասնակի, խառը:

Ключевые слова и выражения: омоним, одежда, семантическая группа, лексический, грамматический, однокоренные, разнокоренные, полный, частичный, смешанный.

Key words and expressions: homonym, clothing, semantic group, lexical, grammatical, single-root, different root, full, partial, mixed.

Նախաբան

Հասկացությունները, իբրև օբյեկտիվ աշխարհի այլևայլ առարկաների, երևույթների, հատկանիշների կրողներ, նյութական արտահայտություն են ստանում հնչյունական որոշակի կաղապարի մեջ բառերի շնորհիվ, որոնք էլ, սերտորեն կապված լինելով իրար հետ, հատկանշվում են երկու հիմնական՝ արտաքին-հնչյունական և ներքին-բովանդակային կողմերով: Դրանց միասնությամբ էլ որոշվում են բառերի տեսակները՝ *համանուններ, հոմանիշներ, հականիշներ, հարանուններ*:

Մենք ձեռնարկել ենք քննել, թե բառերն ընդհանրապես ձևա-իմաստային ինչպիսի դրսևորումներով են հատկանշվում և առանձին խմբեր կազմելով՝ ինչպիսի ընդհանրություններ ու տարբերություններ են երևան հանում միմյանց նկատմամբ «հագուստ» իմաստային (թեմատիկ) խմբում:

Հաճախ միևնույն հասկացության համար առկա են մի քանի բառեր, կամ էլ լեզվում տարբեր հասկացություններ արտահայտվում են միևնույն բառով: Վերջիններս համանուն բառերն են, որոնց ձևավորման մեջ խոշոր դեր է կատարում լեզվի իմաստային համակարգը:

Հայոց լեզուն հարուստ է համանուններով, որոնք, մի ամբողջություն կազմելով, բնութագրվում են որոշակի հատկանիշներով, որոնցից ամենաբնորոշը նրանց հնչյունական կազմի՝ ձևի նույնությունն է և իմաստների արմատական տարբերությունը: Ըստ այդմ էլ համանունները

տարբեր, ինքնուրույն բառային-բառույթային միավորներ են հանդիսանում և համապատասխան իմաստաբանական համակարգ ներկայացնում:

Բովանդակություն

Ուսումնասիրության առարկան *հագուստ* իմաստային (թեմատիկ) խմբի բառերի համանունության դրսևորումն է հայերենում. երևույթ, որի «իմաստային տարբերությունը հանդես է գալիս ձևական նույնությամբ»¹:

Ներկայացնելով համանունական շարքերը՝ հարկ է նշել, որ ըստ անդամների քանակի դրանք լինում են՝ **ա) երկանդամ** (գերակշիռ մասն են), ինչպես՝ **բաղդաղի**¹ (հնգ.) «կանանց մետաքսե ծաղկանկար գլխաշոր» և **բաղդաղի**² «միջնորմին կամ առաստաղին խփվող բարակ փայտե ձողեր, վրան սվաղելու համար, կավար»¹ (ԺՀԼԲԲ), **սուլ**¹ (ժող.) «հողաթափ, մաշիկ» և **սուլ**² (երժշտ.) «ությակի հիմքերոդ ձայնաստիճանը» (ԱՀՀԴԲ), **կտոր**¹ «որևէ բանի առանձին մաս» և **կտոր**² «գործվածք» (ԱՀՀԴԲ), **բ) եռանդամ** համանուններ՝ **ծիրանի**¹ «1. բոսոր, բոցագույն, 2. ծովագույն, կապտավուն, երկնագույն, մավի, 3. արնագույն, կարմրագույն, 4. դեղնագույն, ոսկեգույն, 5. կանաչավուն, կանաչ, կանաչագույն, 6. երփներանգ, գույնզգույն, 7. ծիրանի բոցագույնը, դեղին գույն, 8. կարմիր ներկ, որ ստացվում էր որոշ խխունջներից, 9. այդ ներկով ներկված կտոր, 10. այդ կտորից կարված հագուստ, 11. երկար ծիրանագույն անթևք վերնագգեստ, որ հագնում են միապետները հանդիսավոր պահերին», **ծիրանի**² «1. ծիրանենի, 2. ծիրանենու փայտից պատրաստված» և **ծիրանի**³ «*ծիրան* բառի սեռական հոլովաձևը» (ԺՀԼԲԲ), **գ) քառանդամ**՝ **գազ**¹ (ֆիզ., քիմ.) «ֆիզիկական մարմին, որի բաղադրիչ մասերը շատ թույլ են կապված և ազատորեն շարժվելով՝ ձգտում են զբաղեցնել այն ամբողջ տարածությունը, որի մեջ նրանք պարփակված են», **գազ**² (բսբ.) «թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույս, կոծոծ», **գազ**³ (հնգ.) «1. երկարության չափ՝ հավասար 112 սմ-ի, 2. նույն երկարությունն ունեցող փայտյա կամ մետաղյա ձող, որն օգտագործվում է երկարություն չափելու համար, 3. մի գազաչափ» և **գազ**⁴ «մետաքսյա նուրբ թափանցիկ գործվածք, շղարշ» (ԺՀԼԲԲ), **դ) հնգանդամ**՝ **կար**¹ «1. կարելը, 2. շուլալելը, 3. կարվող իրը, 4. կարելու եղանակը, հատկությունը, 5. կարված տեղը, 6. մարմնի տարբեր անդամների միացման տեղը», **կար**² (հնգ.) «1. կարողություն, 2. ձեռնհասություն, հնարավորություն, 3. կարելի հնարավոր», **կար**³ «գլխի մազերը երկու կողմ սանրելիս մեջտեղում գոյացած գիծը», **կար**⁴ «հասկի գլուխը կազմող 4 ճյուղերից ամեն մեկը» և **կար**⁵ «*կամ* բայի անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքը» (ԺՀԼՀԲ):

¹ Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, էջ 50:

Վերոնշյալ բոլոր համանունների այս կամ այն իմաստը որոշակի է դառնում միայն խոսքային միջավայրում:

Հագուստ իմաստային (թեմատիկ) խմբի համանունները դասակարգվում են նաև՝ *ըստ համանուն միավորների բնույթի, ըստ ընդգրկման ծավալի և ըստ առաջացման եղանակի*: Այսպես՝

ա) *ըստ համանուն միավորների բնույթի՝ բառական համանուններ* (որոնց մեջ առկա է բառերի սկզբնաձևերի համանունություն), ինչպես՝ **կորդակ**¹ «1. հագուստի օձիքին ամրացված գլխարկ, գլխի ծածկոց, 2. (հզվդ., պատմ.) սաղավարտ, գլխապան» և **կորդակ**² (մանգ.) «բեռնաբարձ՝ բեռ բարձող մեքենա» (ԺՀԼԲԲ) և *բառաքերականական համանուններ* (որոնց մի եզրն արտահայտված է բառի սկզբնաձևով, մյուսը՝ բառի քերականական ձևով), ինչպես՝ **կարի**¹ «1. ուժեղ կերպով, սաստիկ, հույժ, խիստ կերպով, սաստկապես, ուժգնապես, ուժգնորեն», **կարի**² «կարիք» և **կարի**³ «կար գոյ. եզակի անորոշ տրականի հոլովաձևը» (ԺՀԼՀԲ):

բ) *Ըստ ընդգրկման ծավալի՝* տարբերում են *լրիվ, մասնակի և խառը* համանուններ²:

Լրիվ համանունները նույնական են և՛ հնչյունակազմով ու արտասանությամբ, և՛ հարացուցային բոլոր ձևերում, պատկանում են միևնույն խոսքի մասին (գոյական, ածական), օրինակ՝ **դոմինո**¹ «խաղ՝ հատուկ ոսկրե կամ փայտյա 28 աղյուսակների միջոցով» և **դոմինո**² «ղիմակահանդեսի զգեստ՝ լայն թիկնոցի ձևով» (ԺՀԼԲԲ), **կապոտ**¹ «1. կանացի զգեստ, 2. ֆրանսիական զինվորական շինել» և **կապոտ**² (տեխ.) «մեքենաների կամ մեխանիզմների ծածկոց, կափարիչ» (ԱՀՀԴԲ), **գազե**¹ «շղարշե» և **գազե**² «1. գազեղեն, 2. գազով վառվող» (ԺՀԼՀԲ) և այլն:

Մասնակի համանունները բավական շատ են: Դրանք այն համանուններն են, որոնք պատկանում են տարբեր խոսքի մասերի (ամենաակտիվն իհարկե գոյականն է, որը համանունական հարաբերության մեջ է մտնում բոլոր մյուս խոսքի մասերի հետ), նույնական են բառի ուղիղ ձևերում, սակայն հակադրվում են քերականական կամ հարացուցային ձևերում, ինչպես՝ **կարող**¹ (գոյ.) «դերձակ» և **կարող**² (ած.) «գորավոր, հզոր», **կիտել**¹ (գոյ.) «զինվորական տարազային բաճկոնակ» և **կիտել**² (բայ) «կուտակել, դիզել», **հանդերձ**¹ (գոյ.) «հագուստ» և **հանդերձ**² (կապ) «միասին» և այլն (ԱՀՀԴԲ):

Խառը համանունական շարքերը *հագուստ* իմաստային (թեմատիկ) խմբում բազմանդամ համանուններն են (եռանդամ և քառանդամ), որոնց

² Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1., Երևան, 1979, էջ 2 11-2 13:

անդամները միմյանց նկատմամբ գտնվում են և՛ լրիվ, և՛ մասնակի համանունական հարաբերության մեջ, ինչպես՝ **վառ¹** (գոյ.) (հնգ.) «շարականի ութ ձայներից մեկը», **վառ²** (ած.) «վառվորուն, պայծառ» և **վառ³** (գոյ.) (հնգ.) «1. զարդարուն քող, 2. ասեղնագործած արքայական դրոշակ» (ԱՀՀԴԲ): Սրանց մեջ երկու բաղադրիչներ (**վառ¹**-ն ու **վառ³**-ը) գտնվում են լրիվ համանունության հարաբերության մեջ, իսկ երրորդ (**վառ²**) բաղադրիչի նկատմամբ՝ մասնակի:

գ) *Հստ առաջացման եղանակի՝ հազուստ* իմաստային (թեմատիկ) խմբում առանձնացվում են՝

1. **համարմատ (նույնակազմ)³ համանուններ**, որոնք ունեն ծագումնային ընդհանրություն, այսինքն՝ բազմիմաստ բառերի տարբեր իմաստներն այնքան են հեռացել իրարից, որ խզվել է նրանց իմաստային անմիջական կապը և նույն բառական միավորը գիտակցվում է որպես տարբեր բառեր: Իհարկե, մի փոքր դժվարություն է ներկայացնում այս համանունների տարբերակումը, սակայն բերենք մի քանի համանունների օրինակներ, որոնք, մեր կարծիքով, նույնական ծագում ունեն, ինչպես՝ **վերնոց¹** «վրայից հագնելու սպիտակ վերնագգեստ՝ մաքուր երևալու համար, վերնահագուստ» և **վերնոց²** (հզվդ.) «տան վերնի վանդակապատ մասը» (ԺՀԼԲԲ), **ուսաբարձ¹** «(դերձ.) որոշ զգեստների ուսատեղերին դրվող բարձիկ» և **ուսաբարձ²** (հզվդ.) «ուսերի վրա բարձած, ուսերին դրված» (ԺՀԼՀԲ) համանունները և այլն: Ստ. Մալխասյանցի բառարանում հանդիպում են՝ **կրկնոց¹** «վրայից հագնելու զգեստ (վերարկու, փիլոն)» և **կրկնոց²** «երկրորդ ամուսնություն (առաջին ամուսնուն մեռած համարելով)»⁴:

2. **Տարարմատ (տարակազմ) համանուններ**. սրանք տարբեր ծագում ունեցող բառեր են: Օրինակ՝ **փակեղ¹** «1. (հնգ.) գլխի փաթեթ, չալմա, 2. (եկեղ.) գլխի ծածկույթ, վեղար, 3. (եկեղ.) ուսի ծածկույթ, վակաս, 4. (եկեղ.) վրայի ծածկույթ, փիլոն, 5. (հնգ.) կանանց և աղջիկների գլխի ծածկույթ, 6. (հնգ.) վարշամակ, դաստառակ, 7. (հնգ.) բաճկոն» և **փակեղ²** (կզմխ.) «առանձին մկաններն ու նրանց փնջերը, ինչպես և այն սպիտակ, փայլուն, պինդ թաղանթը, որը ծածկում՝ փաթաթում է մկանը» (ԺՀԼԲԲ) և այլն:

Հազուստ իմաստային խմբի *տարարմատ* համանուններն առաջացել են տարբեր կերպ.

³ Սրա մասին տե՛ս **Էդ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 66, **Վ. Առաքելյան**, **Ա. Խաչատրյան**, **Ս. Էլոյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1., Երևան, էջ 2 13, **Ս. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 53:

⁴ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 507:

ա) բառի կամ բառաձևի պատահական նմանության հիմքով, ինչպես՝ **կարվի**¹ «արվել բայի պայմանական ապառնիի եզակի 3-րդ դեմքը» և **կարվի**² «կարվել բայի ըղձական ապառնիի եզակի 3-րդ դեմքն ու ժխտական դերբայը», **ասվի**¹ (ասր բառի գրաբարյան գործիական հոլովի *ասու* ձևից՝ ի անցումով) «1. բրդե զգեստ, 2. ասվյա, ասվե» և **ասվի**² «ասվել բայի ըղձական ապառնիի 3-րդ դեմքն ու ժխտական դերբայը»:

բ) բառակազմության հետևանքով. ինչպես՝ **անկար**¹ «կար չունեցող» և **անկար**² «անգոր, անկարող»,

գ) փոխառյալ բառի և հայերեն բառի պատահական նմանության հիմունքով, ինչպես՝ **շինել**¹ «1. պատրաստել, 2. կառուցել, 3. նորոգել, 4. ճարտարել, հորինել, 5. եփել, թխել, 6. գեղեցկացնել, զարդարել, 7. որևէ գործով զբաղված լինել» և **շինել**² «(ռուս.) մի տեսակ տաք վերնազգեստ, զինվորական վերարկու» (ԺՀԼՀԲ),

դ) Երբեմն համանունական շարքեր են կազմվում միայն փոխառյալ բառերից, ինչպես՝ **կոմբինացիա**¹ (լատ.) «1. համակեցություն, 2. գործառնություն» և **կոմբինացիա**² «կանացի ներքնազգեստ», **բլուզ**¹ (ֆրնս.՝ blouse) «վերնաշապիկ» և **բլուզ**² (անգլ.՝ blues, թախիծ) «(երժշտ.) ներքական քնարական պարերգի տեսակ» և այլն:

Հաճախ են հանդիպում համանունական այնպիսի շարքեր, որոնց միավորները պատկանում են բառապաշարի տարբեր շերտերի՝ համագործածական և չեզոք (հնացած, բարբառային, խոսակցական, արևմտահայերեն), օրինակ՝ **դրոշակ**¹ «դրոշ» և **դրոշակ**² (հնգ.) «զգեստի քղանցք», **փոխան**¹ (արևմտհ.) «փոխնորդ», **փոխան**² (հնգ.) «փոխարեն» և **փոխան**³ (բրբ.) «վարտիք», **փոստալ**¹ (բրբ.) «մորթե հնացած գլխարկ» և **փոստալ**² (արևմտհ.) «անբարոյական կին» (տե՛ս ԱՀՀԴԲ, ԺՀԼՀԲ) և այլն: Այս դեպքում գործ ունենք *պատմական* համանունության հետ⁵, որին անդրադարձել ենք առանձին հոդվածով⁶:

Ինչպես նկատեցինք, վերոնշյալ համանունական շարքերի անդամներից մեկը *հազուստ* հասկացություն նշող բառ է, իսկ մյուս(ներ)ը պատկանում են իմաստային (թեմատիկ) այլ խմբերի: Հազվադեպ են հանդիպում այնպիսի համանունական շարքեր, որի բոլոր միավորները պատկանեն միևնույն ոլորտին (տվյալ դեպքում՝ *հազուստ* իմաստային խմբին): Նման օրինակներ հիմնականում հանդիպում են բարբառներում:

⁵ Տե՛ս Ն. Պողոսյան, Վաղ աշխարհաբարի իմաստափոխության դասակարգման նոր փորձ, Պատմաբանասիրական հանդես, (2), Երևան, 2012, էջ 230:

⁶ Լ. Ղամոյան, Պատմական համանունությունը «հազուստ» իմաստային դաշտում. - Բանբեր Երևանի համալսարանի, 3 (33), Երևան, 2020, էջ 90-97:

Հր. Աճառյանը գրում է. «Բառը միևնույնն է, բայց երկու բարբառներում տարբեր իմաստ ունի»⁷, ինչպես՝ **երեսնոց**¹ (բրբ.) «վրան ոսկի կամ արծաթ դրամներ շարած կտոր, որ կանայք իբրև գարդ կապում էին ճակատներին» և **երեսնոց**² (բրբ.) «բրդե թելից գործած գլխարկ, որի երկու երկար ծայրերով ծածկում էին ականջները՝ ցրտից պաշտպանվելու համար», **ճթիկ**¹ (բրբ.) «կանացի կոշիկի մի տեսակ, որը քայլելիս, կաշեղով հատակին կամ ներբանին, ձայն է հանում» և **ճթիկ**² (բրբ.) «ասեղնագործության մեջ խաչաձև փոքրիկ նախշ», **ռոտաման**¹ (բրբ.) «1. կոշիկ, 2. երեսը կիսով չափ փակ հասարակ կոշիկ» և **ռոտաման**² (բրբ.) «վարտիք (շավար)», **ջորաբ**¹ (բրբ.) «տղամարդու բրդյա գուլպա» և **ջորաբ**² (բրբ.) «ամեն տեսակի կոշիկ» (ՀԼԲԲ) և այլն:

Պետք է նկատել, որ մեր ուսումնասիրության ընթացքում *հագուստ* հասկացությունն նշող բառերից կազմված համանուններ գրեթե չենք հանդիպել *գրաբարում* (միայն վերոհիշյալ *վառ* բառանվան եռանդամ համանունական շարքը), *միջին հայերենում* գտել ենք միայն մի քանի օրինակ, ինչպես՝ **թօփ**¹ (թուրք.) «թնդանոթ, հրանոթ» և **թօփ**² (թուրք.) «գործվածքի կտոր, թոփ», **մախմուր**¹ (արաբ.) «թավիշ, թավշյա կտոր» և **մախմուր**² (արաբ.) «գինով, հարբած, խմած, խումար», **շմաթ**¹ (պրսկ.) «բարակ կրծկալ, որ ծածկում է կանանց կուրծքը» և **շմաթ**² «նեղ լուսամուտ, պատուհան (եկեղեցու զմբեթի վրա)» և այլն:

Որոշ լեզվաբաններ համանուն բառերի առակայությունը բառապաշարի համակարգում դիտում են բացասական երևույթ: Ֆրանսիական հայտնի բարբառագետ Ժիյերոնը և նրա հետևորդները գտնում են, որ լեզուն համբերատարությամբ «տանում է համանունությունը շնորհիվ այն բանի, որ համանուն բառերից շատերը ունեն տարբեր հատկանիշներ», նրանք համանունությունը «ախտաբանություն» են համարում, որը կարիք ունի բուժման միջոցառումների: Ոմանք կարծում են, որ «համանունները խոչընդոտ են փոխըմբռնման համար»⁸ (Ռեֆորմատսկի), և դրանց առկայությունը բառապաշարում «չար», «ինքնակործանարար», «դժբախտ» երևույթ է (Բրիջեզ): Սակայն ուսումնասիրողների մի մասն էլ խոսքի հստակությանը սպառնացող լուրջ վտանգ չի տեսնում համանունների օգտագործման հարցում (Բուդագով, Շալունց): Նրանք նշում են, որ համապատասխան խոսքային միջավայրում բավական հստակորեն

⁷ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 564:

⁸ Ավելի մանրամասն տե՛ս Ռ. Շալունց, Ժամանակակից հայերենի համանուն բառերի գործառությունը խոսքի մեջ. - Պատմաբանասիրական հանդես, 2, Երևան, 1972, էջ 12 4-12 5:

բացահայտվում են համանուն բառերի տարբեր իմաստները, և չի կարող խոսքն անհասկանալի դարձնող երկիմաստություն առաջանալ⁹:

Այսպիսով, համանունների ոճական արժեքը հիմնականում դրսևորվում է խոսքային իրադրության մեջ, հատկապես գեղարվեստական խոսքում, կից նախադասությունների մեջ, ինչպես՝

Ա իս, եթե անգամ քարե սիրտ ճարվի՝

Մարդկային սրտում բա կրա՞կ **կարվի**...

Ո՞ր տեղ եք տեսել, որ թել-ասեղով

Կտըրված երակ վերստին **կարվի**...¹⁰

Բերված օրինակում նշված համանուն բառերը թեև ոճական որևէ երանգավորում չունեն, սակայն օժտված են արտահայտչական որոշակի արժեքով. հանդես են գալիս որպես հանգավորման, խոսքի թարմությանը նպաստող միջոց: Խոսքը կառուցելիս գրողը հենց համանունությունն է դարձրել արտահայտչականության հիմք: Այդպես նաև՝

Նազել, զարդարվել ես գեղեցիկ **հալավ**,

Ամեն մարդ քեզի կասե գեղեցիկ, հա, լավ,

Հոգիս կրակովդ, գեղեցիկ, **հալավ**...¹¹

Համանունության երևույթն առկա է ոչ միայն առանձին բառերի ոլորտում, այլև՝ *հագուստ* իմաստային խմբի բառանուններից կազմված դարձվածային միավորներում (սահմանափակ թվով), ինչպես՝

• **գրպանը դնել**¹ (մեկին) «1. մեկին գերազանցել, մեկի նկատմամբ բացահայտ առավելություններ ունենալ»

• **գրպանը դնել**² (կոխել) «գրպանել, յուրացնել, սեփականել»¹²:

Առանձնացվել է նաև *ոչ բացարձակ*¹³ համանունների երկու տեսակ՝ ա) **համահունչ** (կամ **նույնահունչ**) համանուններ, որոնք համանուն են միայն բանավոր խոսքում, այլ կերպ՝ համանուն են հնչյունով, ինչպես՝ **մախթել**¹ (գրությամբ՝ մախթել) «1. կարել, մախաթել, 2. (ծած.) գողանալ» և **մախթել**² (գրությամբ՝ մաղթել) «1. (կրոն.) աղոթելով խնդրել, 2. բարեմաղթել, բարին ցանկանալ», բ) **նույնագիր** համանուններ, որոնք

⁹ Ս. Մելքոնյան, Բառային համանունների կիրառությունը գեղարվեստական խոսքում. - Լրաբեր հասարակական գիտությունների, 12 (42), Երևան, 1981, էջ 45:

¹⁰ Պարույր Մսակ, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 81:

¹¹ Զիվանու քնարը, 1, Երևան, 1959, էջ 456:

¹² Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

¹³ Հստ համանունների տարբեր խմբերի բնորոշ հատկանիշների՝ Ս. Աբրահամյանն առանձնացնում է բացարձակ և ոչ բացարձակ համանուններ (տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 51):

համանուն են միայն գրավոր խոսքում, այլ կերպ՝ համանուն են գրությամբ, ինչպես՝ **հագար**¹ [հագար] «արաբ, հագարացի» և **հագար**² [հաքար] «*հագնել* բայի անցյալ կատարյալի եզակի 2-րդ դեմքը», **հագնի**¹ [հագնի] «[բսբ.] աղավնիճագգիների ընտանիքին պատկանող զարդաթուփ, որի պտուղներն օգտագործվում են որպես համեմունք» և **հագնի**² [հաքնի] «*հագնել* բայի ըղձական ապառնիի եզակի 3-րդ դեմքն ու ժխտական դերբայը», **օդ**¹ [օդ] (հնգ.) «կռշիկ» և **օդ**² [օթ] «1. մթնոլորտ, 2. շնչելու օդ, 3. եղանակ, կլիմա» և այլն:

Այսպիսով՝ վերոհիշյալ բոլոր համանուններն էլ, լինեն դրանք բացարձակորեն տարբեր իմաստ արտահայտող կամ բառիմաստի տարբեր փոփոխություններով լրացուցիչ իմաստներ ձեռք բերած և որոշ իմաստային նրբերանգներով տարբերվող բառեր ու բառաձևեր, միննույն է, դրանք իրենց իմաստային առանձնահատկությունները դրսևորում են միմիայն համապատասխան խոսքային միջավայրում:

Եզրակացություն

Հագուստ իմաստային (թեմատիկ) խումբը հարուստ է *հագուստ* հասկացություն նշող բառերից կազմված համանուններով, որոնք հատկապես շատ են բարբառներում: Համանունների շարքերը հիմնականում կազմված են երկու, երեք և չորս (երբեմն ավելի) բառերից, սակայն գերակշռում են երկանդամները: Ըստ համանուն միավորների բնույթի՝ առանձնացվում են *բառական* և *բառաքերականական* համանուններ, ըստ ընդգրկման ծավալի՝ *լրիվ*, *մասնակի* և *խառը* համանուններ, ըստ առաջացման եղանակի՝ *համարմատ* և *տարարմատ*: *Տարարմատ* համանուններն առաջացել են տարբեր կերպ. **ա)** բառի կամ բառաձևի պատահական նմանության հիմքով, **բ)** բառակազմության հետևանքով, **գ)** փոխառյալ բառի և հայերեն բառի պատահական նմանության հիմունքով, **դ)** միայն փոխառյալ բառերից: *Հագուստ* իմաստային (թեմատիկ) խմբում առանձնացվում են նաև ոչ բացարձակ համանունների երկու տեսակ՝ *համահունչ* (որոնք համանուն են միայն բանավոր խոսքում) և *նույնագիր* (որոնք համանուն են միայն գրավոր խոսքում): Հաճախ համանունական շարքերի միավորները պատկանում են բառապաշարի տարբեր շերտերի՝ համագործածական և չեզոք (հնացած, բարբառային, խոսակցական, արևմտահայերեն): Սովորաբար համանունական շարքերի անդամներից մեկը *հագուստ* հասկացություն նշող բառ է, իսկ մյուս(ներ)ը պատկանում են իմաստային (թեմատիկ) այլ խմբերի: Հազվադեպ են հանդիպում այնպիսի համանունական շարքեր, որի բոլոր միավորները պատկանեն միննույն ոլորտին (տվյալ դեպքում՝ *հագուստ* իմաստային խմբին): Համանունների ոճական արժեքը հիմնականում դրսևորվում է խոսքային իրադրության մեջ, հատկապես գեղարվեստական խոսքում:

**Проявления омонимии слов, выражающих понятие „одежда»,
в армянском языке**

Резюме

Семантическая (тематическая) группа «одежда» богата омонимами, состоящими из слов, обозначающих понятие одежды, особенно их очень много в диалектах. Серии омонимов обычно состоят из двух, трех и четырех (иногда более) слов, но преобладают двучленные. По типу омонимов мы различаем лексические и грамматические синонимы, по объему вовлеченности: полные, частичные и смешанные омонимы, по способу возникновения: однокоренные и разнокоренные. Разнокоренные омонимы появлялись по-разному. а) на основе случайного сходства слова или словаформа, б) на основе словообразования, в) на основе случайного сходства заимствованного слова и армянского слова, г) только на заимствованных словах. В семантической (тематической) группе «одежда» также разделены два типа неабсолютных омонимов: омофоны (которые являются омонимами только в устной речи) и омографы (которые являются омонимами только в письменной форме). Часто единицы омонимического ряда относятся к разным слоям лексики: общего использования и нейтральной (устаревшему, диалектному, разговорному, западно-армянскому). Обычно один из членов омонимического ряда является словом, обозначающим понятие «одежды», а другие (другие) относятся к другим смысловым (тематическим) группам. Редко встречаются омонимичные серии, все единицы которых принадлежат к одному и тому же полю (в данном случае — к семантической группе «одежды»). Стилистическое значение омонимов в основном проявляется в словесной ситуации, особенно в художественной речи.

Lusine Ghamoyan

**Manifestations of Homonymy of Words Expressing the Concept
"Clothing" in Armenian**

Summary

The semantic (thematic) group "clothing" is rich in homonyms, consisting of words denoting the concept of clothing, especially there are a lot of them in dialects. The series of homonyms usually consist of two, three and four (sometimes more) words, but two-member words predominate. According to the type of homonyms, we distinguish lexical and grammatical synonyms, according to the volume of involvement: full, partial and mixed homonyms, according to the method of occurrence: single-root and different root. Divergent homonyms

appeared in different ways. a) on the basis of casual similarity of a word or word form, b) on the basis of word formation, c) on the basis of casual similarity of a borrowed word and an Armenian word, d) on borrowed words only. In the semantic (thematic) group "clothing" there are also two types of non-absolute homonyms: homophones (which are homonyms only in oral speech) and homographs (which are homonyms only in writing). Often the units of the homonymic series belong to different layers of vocabulary: common usage and neutral (obsolete, dialectal, colloquial, Western-Armenian). Usually, one of the members of the homonymic series is a word denoting the concept of clothing, while the others belong to other semantic (thematic) groups. Rarely, there are homonymous series, all the units of which belong to the same field (in this case - to the semantic group of clothing). The stylistic meaning of homonyms is mainly manifested in verbal situations, especially in artistic speech.

Խմբագրություն է ուղարկվել 18. 05. 2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 03. 06. 2022թ.

Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.